

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Քաղաք Երևան

երեքը օգոստոսի, երկու հազար տասնութ թվական

ՀՀ արդարադատության նախարարությունում օգոստոսի 3-ին անցկացվել է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստ:

ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ՝

Արտակ Ջեյնալյան- ՀՀ արդարադատության նախարար

Կարեն Հակոբյան- ՀՀ ԱՆ Հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության պետ

Արթուր Սաքունց-«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն

Եվգենիա Իվանովնա-«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Սառա Ղազարյան-«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Արտակ Կիրակոսյան-«Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» հասարակական կազմակերպություն

Լիլիթ Քամալյան-«Հայաստանի համայնքների միություն» իրավաբանական անձանց միություն

Ավետիք Իշխանյան-«Հայաստանի Հելսինկյան կոմիտե» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն

Թամարա Աբրահամյան-«Արազա» բարեգործական հասարակական կազմակերպություն

Կարեն Ջադոյան-«Իրավաբանների հայկական ասոցացիա» հասարակական կազմակերպություն

Սաիդ Ավդալյան-«Երիտասարդ եզդիներ» հասարակական կազմակերպություն

Արշակ Գասպարյան-«Սոցիալական արդարություն» հասարակական կազմակերպության նախագահ,

Անահիտ Գասպարյան-«Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպություն

Արմեն Եսոյան-«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպություն

Արթուր Չերչինյան–«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանության» հասարակական կազմակերպություն
Մեսրոպ Մովսեսյան-Ա1+ հեռուստաընկերության տնօրեն

Քվորումն ապահովված էր:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բացման խոսք, օրակարգային հարցերի հիմնական նպատակների ներկայացում:
2. Թեմա՝ Անազատության մեջ գտնվող անձանց՝ արտաքին աշխարհի հետ շփման-հաղորդակցման խնդրի կարգավորում:
3. Թեմա՝ ՔԿՀ-ներում ոչ կանոնադրական հարաբերությունների լուծման հնարավոր ուղիներ:

Արտակ Չեյնայան- Նախարար Չեյնայանը ողջունել է նիստի մասնակիցներին և նշել, որ Արդարադատության նախարարությունը ակնկալում է մշակել համապատասխան կարգավորումներ և խնդիրների լուծման հստակ մեխանիզմներ՝ հաշվի առնելով անազատության մեջ գտնվող անձանց արտաքին աշխարհի հետ շփման սահմանները:

Կարեն Հակոբյանը անդրադարձել է Խորհրդի անդամների կողմից ներկայացված առաջարկություններից մեկին, այն է՝ կիրառել խրախուսանքների ինստիտուտը՝ տեսազանգի կամ քրեակատարողական հիմնարկներին կից բացօթյա հանդիպումների տեսքով, ինչը ըստ Խորհրդի անդամների ուսումնասիրությունների՝ բավականին տարածված է ԱՊՀ երկրներում: Խորհրդի անդամներին տեղեկացվել է, որ դատապարտյալների նկատմամբ խրախուսանքներ կիրառելու պրակտիկան Հայաստանում ևս կա. այս տարվա նոյեմբերից ոլոր ՔԿՀ-ներում պահվող օտարերկրյա քաղաքացիները, ինչպես նաև մերձավոր ազգականների հետ կարճատև տեսակցության օբյեկտիվ հնարավորություն չունեցող ազատությունից զրկված անձինք ամսվա ընթացքում երկու անգամ մինչև 20 րոպե տևողությամբ տեսազանգից օգտվելու հնարավորություն կունենան:

Արթուր Սաքունցը նշել է, որ ՀԿ-ն ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր օրենսդրական առաջարկություն է ներկայացրել անազատության մեջ գտնվող անձանց՝ արտաքին աշխարհի հետ շփման-հաղորդակցման խնդրի կարգավորման վերաբերյալ: Արթուր Սաքունցը նշել է, որ սույն առաջարկությունները ներակայացվել են դեռևս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից ընտանիքի հետ կալանավորված անձի տեսակցությունների երաշխավորմանն ուղղված օրենսդրական նախագծերի փաթեթի մշակման ժամանակ, որը հետագայում լրամշակվել է ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ և տեղադրվել www.e-draft.am - ում: Ներկայացվել է նաև գրավոր փաստաթուղթ՝ կասկածյալի, մեղադրյալի և դատապարտված անձանց արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի ընդհանուր դրույթների, կալանավորված և ձերբակալված անձանց մերձավոր

ազգականի և օրինական ներկայացուցչի հետ տեսակցության իրավունքի սահմանափակման, դատապարտված անձանց տեսակցության իրավունքի վերաբերյալ:

Արտակ Կիրակոսյանը նշել է, որ ՔԿՀ-ներում ոչ կանոնադրական հարաբերությունների լուծման հնարավոր ուղիների վերաբերյալ պետք է կազմակերպել ավելի մասնագիտացված քննարկում՝ Քրեակատարողական վարչության ներկայացուցիչների և մասնագիտացված ՀԿ-ների մասնակցությամբ: Ա. Կիրակոսյանի խոսքով՝ անհրաժեշտ է նաև պետական համապատասխան կառույցը ընդունի նման խնդիրների առկայությունը: Խորհրդի անդամնի համոզմամբ պետք է համատեղ ձևակերպվեն մարտահրավերները և խնդիրները և միայն դրանից հետո փնտրվեն հնարավոր լուծումները:

Արշակ Գասպարյանը հանդես է եկել առանձին զեկույցով՝ «Քրեական ենթամշակույթը բանտերում» թեմայով: Մասնավորապես ներկայացվել է Մոլդովայի օրինակը: Կատարված հետազոտության նպատակն է եղել բացահայտել, թե ինչպիսինն է քրեական ենթամշակույթի տարածվածությունը, ինչպիսինն է կապը քրեական ենթամշակույթի և բռնության միջև, և թե ինչպես կարելի է այն խզել: Ա. Գասպարյանը ներկայացրել է ընդհանուր տվյալներ Մոլդովայի և Հայաստանի ՔԿՀ-ների իրավիճակի վերաբերյալ: Բանախոսը նաև ներկայացրել է հստակ լուծման ճանապարհներ՝ բանտերի շինության նախընտրելի ձևերի, ֆինանսների բաշխման և տնօրինման, անձնակազմի համալրման և վերապատրաստման մասին: Հետազոտության ընթացքում ընդհանուր մտահանգումը հետևյալն է՝ քրեական ենթամշակույթի առկայությունը խթանում է թե՛ աշխատակազմի և թե՛ բանտարկյալների անապահովության բարձր մակարդակին և բռնությանը:

Արձանագրությունը բաղկացած է 3 էջից: